**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

**<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>**

**ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԼՕ-2020/118, 28.11.2020թ.

**Բողոք բերող անձ՝** «Ցիկլոիդ» ՍՊԸ

**Պատվիրատու՝** Երևանի քաղաքապետարան

**Գնման ընթացակարգի ծածկագիրը՝** «ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» հրատապ մեկ անձ

**Գնման առարկան՝** «Արցախի Հանր. Երևան ժամանած ընտ. /անձանց/ պատերազմ մեկնած անձանց ընտ. և վիրավոր զինվորների ընտ. սոց. աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի» ձեռքբերում

**Բողոքի պահանջը՝** Դադարեցնել կամ անվավեր ճանաչել «ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» ծածկագրով հրատապ մեկ անձի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված 4.3-րդ կետով «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ**
**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ**

**Նիստերին կարելի է առցանց հետևել** https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի պողոտա, 54 բ շենք

Բողոքաբեր՝ <<Ցիկլոիդ>> ՍՊԸ

հասցե՝ Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս, Նորքի 1 նրբ. 5

տնօրեն՝ Շիրազ Գևորգյան, հեռ՝ 077-17-97-54, էլ. հասցե՝cikloidllc@mail.ru

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

հասցե՝ ք. Երևան, Արգիշտիի 1

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ԵՔ-ՀՄԱԱՊՁԲ-20/6 ծածկագրով հրատապ մեկ անձի միջոցով գնում կատարելու ընթացակարգ

Արցախի Հանր. Երևան ժամանած ընտ. /անձանց պատերազմ մեկնած անձանց ընտ. և վիրավոր զինվորների ընտ. սոց աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի ձեռքբերում

# Բ Ո Ղ Ո Ք

Հարգելի բողոքներ քննող անձ

Հայտնում եմ Ձեզ, որ ս. թ. նոյեմբերի 10-ին Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է Արցախի Հանր. Երևան ժամանած ընտ. /անձանց պատերազմ մեկնած անձանց ընտ. և վիրավոր զինվորների ընտ. սոց աջակցություն տրամադրելու նպատակով կազմակերպվել է սննդամթերքի ձեռք բերման ընթացակարգ:

Վերոնշյալ ընթացակարգին մասնակցությունն է ապահովել նաև Ցիկլոիդ ՍՊԸ-ն:

Ցիկլոիդ ՍՊԸ -ն հայտ է ներկայացրել մի քանի լոտերի մասով և ըստ մրցույթի գնահատող հանձնաժողովի 13.11.2020 թվականի թիվ 2 արձանագրության համաձայն՝ մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, ինչի համար հիմք է ընդունվել արձանագրության 3.1 կետով նշված աղյուսակը:

Սակայն միևնույն արձանագրության համաձայն՝ նշվել է, որ Ցիկլոիդ ՍՊԸ -ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ, գնային առաջարկում և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա

փաստաթղթերում /հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման/ բառերի փոխարեն նշվել են /գնանշման հարցման բառերը/:
Մրցույթի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը, ինչպես նշվել է արձանագրությունում, որոշել է մեր ընկերության հայտը մերժել, քանի որ գնային առաջարկը ենթակա չէ շտկման:
Մենք գտնում ենք, որ Պատվիրատուն ի դեմս մրցույթի գնահատող հանձնաժողովի գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ցիկլոիդ ՍՊԸ -ի հայտը նման խախտման համար ենթակա չէր մերժման քանի որ նույն մրցույթի հանձնաժողովը կարող է ներկայացված դիմում-հայտարարության մեջ, գնային առաջարկում և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նույնականացնել ընկերությանը, պատվիրատուին, գնման ընթացակարգի ծածկագիրը, ներկայացված գնման առարկաները՝ ըստ լոտերի:
Գտնում ենք, որ այդ սխալը չէր կարող դիտարկվել որպես էական նշանակություն ունեցող խախտում, իսկ մերժելու արդյունքում մեր հայտը հաղթող են ճանաչվելու ավելի բարձր գին ներկայացրած մասնակիցներ, ինչի արդյունքում ՀՀ պետ. բյուջեն կարող է կրել էական վնասներ:
Գտնում ենք, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ, 7-րդ հոդվածների պահանջները և թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը՝ սխալ մերժելով մեր հայտը:
Այդ իսկ կապակցությամբ խնդրում եմ Ձեզ բողոքը քննել և կայացնել որոշում՝ դադարեցնելով կամ անվավեր ճանաչելով ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6 ծածկագրով հրատապ մեկ անձի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2020 թվականի թիվ 2 արձանագրությամբ կայացված 4. 3-րդ կետով Ցիկլոիդ ՍՊԸ -ի հայտը մերժելու մասին որոշումը:
Կից Ձեզ եմ ներկայացնում՝
- բողոքարկման համար վճարված պետական տուրքի անդորրագրի պատճենը
- Ցիկլոիդ ՍՊԸ -ի տնօրենի անձնագրի և պետ. ռեգիստրի վկայականի պատճենները,
- Ցիկլոիդ ՍՊԸ -ի կողմից ներկայցված թիվ 1, 2 և 1. 1 հավելվածները:
Առդիր՝ 7 թերթ:

Ցիկլոիդ ՍՊԸ , տնօրեն Շիրազ Գևորգյան

ստորագրություն 24.11.2020

«ՑԻԿԼՈԻԴ» ՍՊԸ
«CIKLOID»
Կ.Տ
00444541
1-05